ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **10/03/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 22 անդամներ:

Բացակա էին՝ Վլադիմիր Առաքելյանը, Էմիլ Հարությունյանը, Նազիկ Հարությունյանը, Գևորգ Պողոսյանը (գրանցվել է, սակայն չի մասնակցել նիստին), Գուրգեն Օսիպյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Արթուր Մովսիսյանը, Աննա Չոբանյանը, Արմեն Պողոսյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Արուսյակ Առաքելյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի երկրորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստիհետևյալ օրակարգը.
1) Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Զբոսայգիների կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.
2) Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Վերելակների արդիականացում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.
3) Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից

սուբվենցիա ստանալու նպատակով «Աբովյան համայնքի Բալահովիտ բնակավայրում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.
4) Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Լուսավորության համակարգի կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.
5) Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Ջրահեռացման համակարգերի կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.
6) Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Համայնքային փողոցների ասֆալտապատում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.
7) Աբովյան համայնքում «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման» ծրագրի Բաղադրիչ 2-ին մասնակցելու մասին.
8) Աբովյան համայնքի կազմում ընդգրկված նախկին համայնքների 2021 թվականի բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները հաստատելու մասին.
9) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 05-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
10) Աբովյան համայնքի սեփականություն համարվող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
11) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող ավտոմեքենան աճուրդային կարգով օտարելու մասին.
12) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 8-րդ ենթակետում ներառված «Աբովյան համայնքի կազմում ընդգրկված նախկին համայնքների 2021 թվականի բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները հաստատելու մասին» որոշման նախագիծը հանել օրակարգից, քանի որ նշված բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության կողմից եզրակացությունը տրամադրելուց հետո այն պետք է կրկին ներկայացվի ավագանու քննարկմանը:

Պատասխանվեց, որ նշված հարցը օրակարգում ընդգրկվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի պահանջը կատարելու նպատակով, որի համաձայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը: Միաժամանակ նշվեց, որ նշված հարցի վերաբերյալ հարցում է արվել ՀՀ Կոտայքի մարզպետարան և ստացվել է պատասխան, որ Աբովյան համայնքին միացած համայնքների 2021 թվականի բյուջեների տարեկան հաշվետվությունները անհրաժեշտ է ավագանու հաստատմանը ներկայացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետներում՝ առանց աուդիտորական եզրակացության, իսկ աուդիտորական կազմակերպության կողմից կազմված եզրակացությունը ներկայացնել ի լրումն՝ պայմանագրով սահմանված ժամկետների ավարտից հետո:

Հարց հնչեց, որ եթե որոշման նախագծին կողմ քվեարկելուց հետո աուդիտորական մասնագիտացված կազմակերպության կողմից թերություններ արձանագրվեն, ին՞չ հետևանքներ կարող են լինել:

Պատասխանվեց, որ այժմ հաստատվում է բյուջեի կատարողականի թվային մոդելը և աուդիտորական մասնագիտացված կազմակերպության կողմից թերություններ արձանագրելուց հետո բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններում թվերը փոփոխության չեն կարող ենթարկվել, կարող են հարցականի տակ դրվել կատարողականի հիմքերը:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՁՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Զբոսայգիների կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հարց հնչեց բնակավայրերում բոլոր խնդիրները գույքագրելու վերաբերյալ, ինչպես նաև առաջարկվեց առաջնահերթ լուծել կենսական նշանակության խնդիրները:

Պատասխանվեց, որ բոլոր 11 բնակավայրերում իրականացվել է խնդիրների գույքագրում, ինչպես նաև հարցերը քննարկվել են հանրային լսումների ժամանակ և առաջնահերթություններ են արվել հաշվի առնելով համայնքի բնակիչների կարծիքները: Նշվեց նաև, որ կան խնդիրներ, որոնց ծախսը չի գերազանցում 50 000 000 (հիսուն միլիոն) դրամը և բնակչության թվաքանակից ելնելով չեն կարող ընդգրկվել սուբվենցիոն ծրագրերում, սակայն այդ խնդիրները կներառվեն համայնքի հնգամյա զարգացման ծրագրում և կկարգավորվեն համայնքի բյուջեի հաշվին, ըստ առաջնահերթության:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Վերելակների արդիականացում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Առաջարկվեց համայնքի բոլոր շենքերի վերելակները վերանորոգելու փոխարեն ըստ հերթականության ամբողջությամբ փոխել:

Պատասխանվեց, որ բոլոր վերելակները գտնվում են տեխնիկապես լավ վիճակում, իսկ վերելակների ամբողջությամբ փոխելը կապված է մեծ ծախսերի հետ և այդ գումարը նպատակահարմար է ծախսել այլ խնդիրների լուծման համար:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Աբովյան համայնքի Բալահովիտ բնակավայրում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Լուսավորության համակարգի կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Ջրահեռացման համակարգերի կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հարց ինչեց առկա ջրահեռացման համակարգի խցանման և ջրի քանակի թողունակության մասին: Առաջարկվեց Աբովյան քաղաքի Նաիրյան և Սարալանջի փողոցների խաչմերուկից մինչև Էլարի փողոց ջրահեռացման համակարգ կառուցել:

Պատասխանվեց, որ խցանումները վերացնելու նպատակով ուսումնասիրություն կկատարվի բոլոր խցանվող փողոցներում, իսկ ջրահեռացման համակարգերը կկառուցվեն ըստ առաջնահերթության:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ»ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Համայնքային փողոցների ասֆալտապատում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ 2-ԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման» ծրագրի Բաղադրիչ 2-ին (այսուհետ՝ Ծրագիր) մասնակցելու նպատակով, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Ծրագրին մասնակցելու նպատակով դիմել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին Աբովյան միավորված համայնքի համար առաջնահերթ խնդիր հանդիսացող «Աբովյան համայնքի կոմունալ տնտեսության համար ավտոտրանսպորտային միջոցների համալրում» առաջարկով:
2. Առաջարկի հաստատման դեպքում կատարել 5% ներդրում՝ Ծրագրի պահանջներին համապատասխան:
3. Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում:
4. Հաստատել Ծրագրին մասնակցելու համար նախաձեռնող խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
5. Հանձնարարել նախաձեռնող խմբին պատրաստել և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին ներկայացնել Ծրագրին մասնակցելու վերաբերյալ առաջարկը:
6. Սահմանել, որ վերականգնված ենթակառուցվածքը չի կարող օտարվել,

սեփականաշնորհվել կամ օգտագործվել այլ նպատակներով՝ Ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2022 թվականի փետրվարի 23-ի N 01/08.1/00987-2022 գրությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի կազմում ընդգրկված նախկին համայնքների 2021 թվականի բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները՝ համաձայն 1-11 հավելվածների:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության կողմից եզրակացությունը տրամադրելուց հետո այն պետք է ներկայացվի ավագանու քննարկմանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 05-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 05-Ա որոշմամբ հաստատված հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝

համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. 2022 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված ավտոտնակները, արտադրական, բնակելի և հասարակական նշանակության կառույցները՝ համաձայն հավելվածի:
2. 2022 թվականի ընթացքում օտարել քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող բնակելի, հասարակական, արտադրական նշանակության շինությունների և ավտոտնակների պահպանման ու սպասարկման համար առանձնացված այն հողամասերը, որոնց նկատմամբ գրանցված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց վարձակալության կամ օգտագործման իրավունքը:
3. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
4. Ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Առաջարկվեց լրացուցիչ ուսումնասիրություն կատարելու նպատակով հասարակական նշանակության ինքնակամ շինությունները հանել հավելվածի ցանկից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2022 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2012 թվականի մայիսի 11-ի N 01AA496959 վկայական) 007 LL 70 պետական համարանիշի, տեխնիկական անձնագիրը՝ HJ614083, շարժիչը՝ N 0995731, նույնացման համարը՝ JTEBX3FJ205012185, թողարկման տարեթիվը՝ 2011 թվականի «TOYOTA LAND CRUISER 150 2.7 GAS» մակնիշի թեթև մարդատար ավտոմեքենան:
2. Աճուրդի մեկնարկային գինը սահմանել 11 640 000 (տասնմեկ միլիոն վեց հարյուր քառասուն հազար) դրամ՝ հաշվի առնելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի հունվարի 11-ի թիվ «001-02/Վ-022» գնահատման հաշվետվությունը:
3. Համայնքի ղեկավարին՝ աճուրդը կազակերպել «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի պահանջներին համապատասխան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման պահից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի ապրիլի 15-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Ավագանու անդամներ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ _____

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՋԱՐՈՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ՂԱՋԱՐՅԱՆ _____

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ _____

ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ _____

ՍԵԹՐԱԿ ՍԵԹՐԱԿՅԱՆ _____

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ _____

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ _____

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՆՈՐԱՅՐ ՋԱՐԳԱՐՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ _____

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ՊԱՎԵԼ ՅՈՒԳՈՒՆՅԱՆ _____

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ _____

ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ _____

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ _____

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ _____

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____